



Ծրագիրը  
համաֆինանսավորվել է  
Եվրոպական միության  
կողմից

**ԵԱՀԿ**

Կրթության, մշակույթի և  
կոմունիկացիաների  
կազմակերպություն  
Եվրոպայի ցամաքում

Ծրագիրը  
համաֆինանսավորվել է  
ԵԱՀԿ Երևանյան  
գրասենյակի կողմից



Իրականացնող՝  
Հայաստանի  
երիտասարդ  
իրավաբանների  
ասոցիացիա



Գործընկեր՝  
Ինֆորմացիայի  
ազատության  
կենտրոն



Իրականացնող՝  
«ԼոգոՍ»  
Երիտասարդական  
հասարակական  
կազմակերպություն

«Գյումրու հատուկ խնամքի տների և մանկատների շրջանում կոռուպցիոն ռիսկերի նվազեցման, երեխաների և նրանց ծնողների շահերի և իրավունքների պաշտպանության» ծրագիրը իրականացրել է «ԼոգոՍ» Երիտասարդական հասարակական կազմակերպությունը՝ ««Ուսանողական Իրավաբանական խորհրդատվություն» Իրավաբանական Կլինիկա» հասարակական կազմակերպության և «Արաքս Կենտրոն» Բարեգործական հասարակական կազմակերպության հետ համագործակցությամբ՝ «Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիա» հասարակական կազմակերպության և «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության համագործակցությամբ գործարկվող «Կոռուպցիայի դեմ պայքարի բազմակողմանի խթանում» ծրագրով տրամադրված փոքր ենթադրամաշնորհների շրջանակներում: Ծրագրի բյուջեն կազմել է 1,883,050 ՀՀ դրամ, որից 1,111,250 ՀՀ դրամը տրամադրվել է «Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիա» հասարակական կազմակերպության կողմից: Ծրագրի տևողությունն էր՝ 2015թ. մայիսի 1-ից մինչև 2015թ. սեպտեմբերի 30-ը:

«Կոռուպցիայի դեմ պայքարի բազմակողմանի խթանում» ծրագիրը համաֆինանսավորվում է Եվրոպական միության և ԵԱՀԿ-ի կողմից:

Սույն զեկույցում արտացոլված են Շիրակի մարզի Գյումրի քաղաքում գործող «Թուչունյան Տուն» մանկատուն-կրթարան, «Ֆրիտյոֆ Նանսենի անվան երեխաների խնամքի և պաշտպանության թիվ 2 գիշերօթիկ հաստատություն» ՊՈԱԿ, Գյումրիի «Երեխաների Տուն» ՊՈԱԿ և «Գյումրի քաղաքի երեխաների սոցիալական հոգածության կենտրոն» ՊՈԱԿ հաստատությունների երեխաների, նրանց ընտանիքների անդամների և հաստատությունների աշխատակիցների շահերի և իրավունքների պաշտպանության ապահովման, ընտանիքների և հաստատությունների փոխհարաբերությունների շրջանում հնարավոր կոռուպցիոն ռիսկերի վերաբերյալ անցկացված մոնիթորինգի արդյունքները:

*ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ 1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ*

.....

*2. ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄ .....*

*3. ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՍՈՅԻԱԼԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՊՈԱԿ .....*

*4. «ՃՐԻՏՅՈՑ ՆԱՆՍԵՆԻ ԱՆՎԱՆ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԽՆԱՄՔԻ ԵՎ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԹԻՎ 2 ԳԻՇԵՐՕԹԻԿ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ» .....*

*5. «ԵՐԵԽԱՆԵՐԻ ՏՈՒՆ» ՊՈԱԿ .....*

*6. «ԹՈՂՈՒՆՅԱՆ ՏՈՒՆ» ՄԱՆԿԱՏՈՒՆ-ԿՐԹԱՐԱՆ .....*

*7. ԸՆՏԱՆԻՔՆԵՐ .....*

*8. ԵԶՐԱՓՈՒԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ .....*

*9. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ .....*

# 1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

«Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիա» հասարակական կազմակերպության և «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության կողմից Եվրոպական միության ֆինանսավորմամբ իրականացվող «Կոռուպցիայի դեմ պայքարի բազմակողմանի խթանում» ծրագրի շրջանակներում «ԼոգոՍ» ԵՀԿ-ին տրամադրված դրամաշնորհի միջոցով 2015թ. մայիսի-սեպտեմբերի ամիսներին իրականացվեց «Գյումրու հատուկ խնամքի տների և մանկատների շրջանում կոռուպցիոն ռիսկերի նվազեցման, երեխաների և նրանց ծնողների շահերի և իրավունքների պաշտպանության» ծրագիրը: Ծրագիրը իրականացվել է ««Ուսանողական Իրավաբանական խորհրդատվություն» Իրավաբանական Կլինիկա» հասարակական կազմակերպության և «Արաքս Կենտրոն» Բարեգործական հասարակական կազմակերպության հետ համագործակցությամբ: Ծրագրի նպատակն էր՝ նպաստել Գյումրու հատուկ խնամքի տների և մանկատների շրջանում կոռուպցիոն ռիսկերի նվազեցմանը, ինչպես նաև երեխաների շահերի և իրավունքների պաշտպանության մեխանիզմների ստեղծմանը և ապահովմանն ուղղված մոնիթորինգ:

Ելնելով ժողովրդավարության սկզբունքներից՝ պետությունը պարտավորվել է երեխաների իրավունքների իրագործման ու վերահսկման գործընթացներին մասնակից դարձնել հանրությանը:

1996թ.ին ՀՀ-ն ընդունեց «Երեխայի իրավունքների մասին» օրենքը: ՀՀ-ում երեխաների պաշտպանության համակարգը, ունի ռեսուրսների լուրջ պակաս: Հատկապես մեծ ուշադրության կարիք են զգում կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաները: Հաստատություններում երեխաների տեղավորման պատճառների վերաբերյալ գնահատումը հաճախ անտեսում է երեխայի շահերը հաշվի առնելու սկզբունքը: ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամի (ՅՈՒՆԻՄԵՖ) ուսումնասիրությունը փաստում է, որ Հայաստանի Հանրապետության մոտ 40 խնամքի հաստատություններում (մանկատներ, ցերեկային խնամքի կենտրոններ, գիշերօթիկ հատուկ դպրոցներ) ապաստանած շուրջ 4000 երեխաների 80 տոկոսն ունի առնվազն մեկ ծնող և նրանց հիմնական մասը հաստատություններում են հայտնվել սոցիալական խնդիրների պատճառով: ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի հետազոտությունը փաստում է, որ կառավարությունը մանկատան կամ հատուկ հաստատությունների ամեն մի երեխայի համար միջինը տարեկան ծախսում է 4000 դոլար, մինչդեռ խնամատար ընտանիքում ապրելու դեպքում այդ ծախսը կկրճատվի մինչև 2500 դոլար, ու պետությունը կկարողանա տարեկան 1,8 մլն դոլար տնտեսել: Այս ոլորտը ունի լիարժեք և շարունակական օբյեկտիվ մոնիթորինգի և ուսումնասիրության կարիք, թե՛ տեղական և միջազգային կազմակերպությունների, և թե՛ պետական կառույցների կողմից՝ վեր հանելու հաստատությունների աշխատակիցների և սաների իրավունքների և շահերի պաշտպանության վիճակը և ապահովման նորմատիվները, ինչպես նաև երեխաների, նրանց ընտանիքների անդամների և հաստատության միջև առկա կապը և ընտանիքների հաստատություն

փոխհարաբերություններում բացահայտելու և բացառելու հնարավոր կոռուպցիոն ռիսկերը:

# 2. ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄ

Հաշվի առնելով վերը թվարկած փաստերը և հիմք ընդունելով մոնիթորինգի իրականացման անհրաժեշտությունը և հրատապությունը «Գյումրու հատուկ խնամքի տների և մանկատների շրջանում կոռուպցիոն ռիսկերի նվազեցման, երեխաների և նրանց ծնողների շահերի և իրավունքների պաշտպանության» ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) շրջանակներում ձևավորված 10 հոգանոց մշտադիտարկման խումբը իրականացրեց մշտադիտարկում:

## Հաստատություններում մշտադիտարկման առարկան.

- Երեխաների առողջության պահպանման իրավունքը:
- Երեխաների՝ ծնողներին ճանաչելու և ընտանիքի հետ կապ պահպանելու իրավունքը:
- Երեխայի՝ բռնությունից պաշտպանության իրավունքը:
- Երեխայի կրթության և զարգացման իրավունքը:
- Երեխայի անձնական կյանքի գաղտնիության իրավունքը:

**Մշտադիտարկման գործողությունները.** Մշտադիտարկման խումբը կատարեց ընդհանուր թվով 16 դիտարկման այցեր Գյումրի քաղաքում գործող «Թռչունյան Տուն» մանկատուն-կրթարան, «ՖրիտոյՖ Նանսենի անվան երեխաների խնամքի և պաշտպանության թիվ 2 գիշերօթիկ հաստատություն» ՊՈԱԿ, Գյումրիի «Երեխաների Տուն» ՊՈԱԿ և «Գյումրի քաղաքի երեխաների սոցիալական հոգաձույթի կենտրոն» ՊՈԱԿ հաստատությունների երեխաների և հաստատությունների աշխատակիցների շրջանում՝ նպատակ ունենալով ստուգել հաստատությունների երեխաների և աշխատակիցների իրավունքների և շահերի պաշտպանության իրականացումը: Մշտադիտարկման ընթացքում հաստատությունների աշխատակիցների և սաների կողմից լրացվեցին դիտարկման հարցաթերթիկները՝ նախատեսված հաստատությունների երեխաների և աշխատակիցների համար: Մշտադիտարկման խմբում ներգրավված էին՝ Շիրակի մարզում գործող «Արաքս կենտրոն» ԲՀԿ, «ՈՒԻՄ» Իրավաբանական Կլինիկա ՀԿ, «Ախուրյան» ԵՀԿ, «Լեգատո» ԵՄՀԿ 10 ներկայացուցիչներ, ինչպես նաև ՀՀ Շիրակի մարզպետարանի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնից ներկայացուցիչ: Դիտարկումներին ներգրավված են եղել հաստատությունների ընդհանուր թվով 156 երեխա, հաստատության վարչական անձնակազմի ներկայացուցիչներ՝ տնօրեններ, փոխտնօրեններ, աշխատակազմի անդամներ՝ սոցիալական աշխատողներ, հոգեբաններ, ուսուցիչներ, դաստիարակներ, դայակներ, խոհանոցի աշխատողներ, ընդհանուր թվով՝ 91 աշխատակից: **Ծնողների հետ մշտադիտարկումը.** մշակված հարցաթերթիկներ տրամադրվեցին հաստատությունների սաների ընտանիքների անդամներին լրացնելու և դիտարկելու ընտանիքների և հաստատությունների միջև առկա կապը, ընտանիքների սոցիալական վիճակը, ինչպես նաև հաստատություն-ծնող հարաբերությունները և հնարավոր կոռուպցիոն դրսևորումները՝ հաստատությունների հետ հարաբերություններում: Դիտարկումները իրականացվեցին ընտանիքներ այցերի միջոցով, որի ընթացքում

ընտանիքների անդամների /ծնող, խնամակալ/ կողմից լրացվեցին դիտարկման հարցաթերթիկներ ծրագրի շահառու հանդիսացող 40 ընտանիքների շրջանում:

### 3. «ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԵՐԵՒԱՆԵՐԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱԶԱԿՅՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ

Մշտադիտարկումը իրականացվել է Գյումրի քաղաքի երեխաների սոցիալական աջակցության կենտրոն ՊՈԱԿ հաստատությունում, որի ընթացքում խումբը առաջնորդվել է մշտադիտարկման առարկա հանդիսացող ուղղություններով: Դիտարկումների համար հիմք են ծառայել հաստատությունների ներքին կանոնակարգը, ՀՀ Սահմանադրությունը, «Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենքը, ՄԱԿ-ի Կոնվենցիան երեխայի իրավունքների մասին, ՀՀ Կառավարության 05.08.2004թ N1324-ն, 9 նոյեմբերի 2006 թվականի N 1735-Ն, որոշումները: Գյումրի քաղաքի երեխաների սոցիալական աջակցության կենտրոն ՊՈԱԿ-ում հաշվառված են ընդհանուր թվով 100 երեխաներ: Կենտրոնը ծառայություններ է մատուցում 6-18 տարեկան՝ դժվար իրավիճակում գտնվող երեխաներին և նրանց ընտանիքներին՝ նպաստելով վերջիններիս հիմնախնդիրների նվազեցմանը: Կենտրոնում մատուցվող ծառայություններն են՝ սոցիալ-հոգեբանական, կրթական, առողջապահական իրավունքների և շահերի պաշտպանությանն ուղղված աշխատանքներ և այլն: Մշտադիտարկմանը մասնակցել են աշխատակազմի 18 անդամներ, 6-17 տարեկան 51 երեխաներ և պատանիներ, որոնք գտնվում են հաստատությունում 1 ամսից 5 տարի ժամկետով և երեխաների ընտանիքների 10 անդամներ: Ստորև ներկայացվում է հարցաթերթիկների լրացման արդյունքում ստացված վիճակագրական պատկերը:


**Մշտադիտարկման առաջին ուղղությունը՝ երեխայի առողջության պահպանման իրավունքն է:** Հարցված երեխաների 74%-ը փաստում են, որ կենտրոնի սանիտարահիգիենիկ պայմանները գտնվում են լավ վիճակում: Հաստատության սաների հիգիենիկ զննությունն իրականացվում է բուժքրոջ կողմից ամեն օր, իսկ բուժզննություն երեխաներն անցնում են տարածքային պոլիկլինիկաներում 6 ամիսը 1 անգամ հաճախականությամբ: Անհատական կարիքից ելնելով բուժքրոջ կողմից տրամադրվում է առաջին բուժ. օգնության ծառայություն, իսկ հատուկ դեպքերում առողջական խնդիրներ ունեցող երեխաների սկզբնական բուժզննումն հաստատության կողմից իրականացվելուց հետո ուղղորդվում են համապատասխան հետազոտման և ստանում բուժում պետական պատվերի շրջանակներում: Յուրաքանչյուր սանի համար լրացվում է բժշկական քարտ:

«Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածը սահմանում է երեխայի բռնությունից պաշտպանության իրավունքը: Յուրաքանչյուր երեխա ունի ամեն տեսակի (ֆիզիկական, հոգեկան և այլ) բռնությունից պաշտպանության իրավունք:

Չնայած այն հանգամանքին, որ «Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենքը և Կառավարության N1324-ն որոշումը չի սահմանում որևէ պատժատեսակ հաստատության երեխաների սաստման համար, այնուամենայնիվ, վերոնշյալ կառույցում գոյություն ունեն և գործում են որոշակի պատժատեսակներ: Երեխաների միջև հարաբերությունների


լարվածության, վեճերի, տարաձայնությունների պարագայում աշխատակազմի անդամները պատժում են (50%) կամ հաշտեցնում (41%) **(Նկար 1):**

«Գյումրի քաղաքի երեխաների սոցիալական աջակցության կենտրոն» ՊՈԱԿ-ի սաներից 37-ը նշել են, որ հաստատությունում իրենց նկատմամբ որպես պատիժ երբեմն կիրառվում են այնպիսի պատժատեսակներ, ինչպիսիք են՝ տրանսպորտի գումարից գրկելը, միջոցառումներից գրկելը, խփելը, կենտրոնից տուն ուղարկելը: **(Նկար 2):**



Իսկ հարցված աշխատակիցների կողմից նշված հաճախակի կիրառվող պատժատեսակը երեխային սիրելի զբաղմունքից գրկելն է **(Նկար 3):** Երեխաների կողմից կատարված կարգապահական խախտումների դեպքում աշխատակազմի անդամները իրականացնում են անհատական բացատրական գրույցներ, մանկավարժահոգեբանական աշխատանք, միջանձնային հարաբերությունների վերլուծություն և աշխատանք ծնողի հետ: Կենտրոնի երեխաների մեծամասնության կարծիքով աշխատակազմի վերաբերմունքը իրենց նկատմամբ լավ է, սաների միջև փոխհարաբերությունները՝ ևս:

Նկ.3



**4. «ՖՐԻՏՅՈՖ ՆԱՆՍԵՆԻ ԱՆՎԱՆ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԽՆԱՄՔԻ ԵՎ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԹԻՎ 2 ԳԻՇԵՐՈԹԻԿ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ»**


Հաջորդ հաստատությունը, որտեղ կատարվել է ուսումնասիրությունը, «Ֆրիտյոֆ Նանսենի անվան երեխաների խնամքի և պաշտպանության թիվ 2 գիշերօթիկ հաստատությունն» է: Հաստատությունն իրականացնում էրնտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառված, սոցիալապես անապահով ընտանիքի՝ 6-18 տարեկան երեխաների խնամքի և դաստիարակության ապահովումը, սոցիալ-հոգեբանական վերականգնման աշխատանքների իրականացումը, նրանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանությանն աջակցելը, սննդով, հագուստով և կենցաղային իրերով ապահովումը, հանրակրթական ուսումնական հաստատություններում ուսուցման, ինչպես նաև բժշկական օգնության կազմակերպումը:

Այստեղ հարցումներին մասնակցել են հաստատության 54 սաներ, աշխատակազմի 20, ինչպես նաև երեխաների ընտանիքների 10 անդամներ: Հարցված երեխաների գերակշիռ մասը գտնվում են հաստատությունում 2-10 տարի ժամկետով:

Երեխայի առողջության պահպանման իրավունքի ուղղությամբ կատարված հարցումները ցույց տվեցին, որ հաստատությունը ապահովված է առաջին բժշկական օգնության ծառայությամբ և բժշկական սարքավորումներով: Հարցված երեխաների մեծամասնությունը ամեն օր հիգիենիկ զննում են անցնում բուժքրոջ կողմից, իսկ բժշկական զննություն՝ կարիքից և անհրաժեշտությունից ելնելով: Սաներից 87%-ի կարծիքով կառույցի սանիտարահիգիենիկ վիճակը գտնվում է լավ վիճակում: (Նկար 4):





Այն հարցին, թե հիգիենայի պարագաներ (օձառ, շամպուն, ատամի մածուկ, ատամի խոզանակ, սրբիչ, սանր, եղունգ կտրիչ) տալի՞ս են և ի՞նչ հաճախականությամբ, հարցված երեխաների 99%-ը նշել են, որ ստանում են, իսկ հաճախականության վերաբերյալ 5%-ը նշել է, որ ստանում է ամիսը 1 անգամ, 2%-ը՝ տարին 1 անգամ, 2%-ը՝ տարին 3 անգամ, իսկ 91%-ը՝ տարին 2 անգամ: (Նկար 5)




Հարցված երեխաները փաստում են, որ հաստատության անձնակազմի և երեխաների միջև հարաբերությունները լավ են: Անձնակազմը հետևողական աշխատանք է տանում նրանց օրինավոր վարքագծի ձևավորման համար, իսկ հարաբերությունները մյուս երեխաների հետ ընկերական և ջերմ են:

ՀՀ կառավարության N1324-ն որոշման համաձայն մանկատան/գիշերօթիկի անհնազանդ անկառավարելի երեխայի նկատմամբ կիրառվում է համապատասխան մանկավարժական մոտեցում, մեթոդներ, հնարներ, հաշվի առնելով նրա տարիքը և զարգացման աստիճանը: Արգելվում է որևէ պատժամիջոցի կիրառումը: Երեխաների կողմից լրացված հարցաթերթիկների 98%-ը վկայում են այն մասին, որ հարկ եղած դեպքում հաստատությունում կիրառվում է լայն տարածում գտած պատժամիջոցը՝ սիրելի զբաղմունքից զրկելը: (Նկար 6):

Մանկավարժների հավաստմամբ, հաստատությունում պատժատեսակներ չեն կիրառվում, այլ իրականացվում են անհատական բացատրական զրույցներ: (Նկար 7):



Այն հարցին, թե ինչպես են վարվում աշխատակիցները սաների միջև ծագած վիճաբանությունների, տարաձայնությունների, ինչպես նաև բռնության դեպքերի ժամանակ, երեխաները նշել են, որ իրենց հաշտեցնում են (Նկար 8):



Եթե երեխաներին անարդար կերպով վիրավորել կամ վատ բան են արել, ապա նրանք բողոքում են հաստատության տնօրենին, դաստիարակին, հոգեբանին, ովքեր էլ անհրաժեշտության դեպքում պատժում են մեղավորին: Հարցված աշխատակիցների 96%-ը տեղեկացված է, որ երեխայի նկատմամբ բռնություն կիրառվելու դեպքում փաստը նշվում է արձանագրության հատուկ մատյանում: Իսկ այն դեպքում, երբ երեխայի նկատմամբ

բնությունը կիրառվել է ընտանիքում, ապա համապատասխան մասնագետների (իրավաբան, հոգեբան, սոցիալական աշխատող) կողմից աշխատանք է տարվում ընտանիքի անդամների և երեխաների հետ: Ըստ կառավարության N1324-ն որոշման մանկատանը/գիշերօթիկում իրականացվում է երեխայի անձի զարգացման հատուկ ծրագիր, որում նախատեսվում է անհատական պարապմունքներ, տնային հանձնարարությունների կատարում, ընթերցանություն, ակտիվ խաղեր, մասնագիտական կողմնորշում, մանկատան տնտեսական աշխատանքներին և լրացուցիչ արտադասարանական խմբակներին մասնակցություն՝ ըստ երեխայի հակումների, հետաքրքրությունների, որոնք կարող են կազմակերպվել ինչպես մանկատան ներսում, այնպես էլ մանկատանից դուրս: Երեխաները հավաստեցին, որ հանրակրթական պարտադիր կրթությունից գատ, նրանք հնարավորություն ունեն հաճախելու հաստատությունից դուրս գործող երաժշտական, նկարչական, սպորտային դպրոց, իսկ Ֆ. Նանսենի անվան երեխաների խնամքի և պաշտպանության թիվ 2 գիշերօթիկ հաստատությունում գործում են տարբեր խմբակներ: ՀՀ սահմանադրության 23-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք իրավունք ունի, որպեսզի հարգվի իր անձնական ու ընտանեկան կյանքը: Այն հարցին, թե արդյո՞ք երեխաները ստանում են էլեկտրոնային նամակներ և էթե այո, ապա ո՞ւմ են հասանելի դրանք, երեխաների 74%-ը նշել են, որ չեն ստանում նամակներ, իսկ ստացողների 26%-ի հավաստմամբ իրենց անձնական նամակները ոչ ոքի հասանելի չեն: Այդ մասին հավաստեցին նաև կառույցի աշխատակիցները: Հաստատությունում բոլոր երեխաներն ունեն իրենց անձնական պահարանները: Երեխաների հավաստմամբ, ոչ ոք չի կարող բացել այն, իսկ հատուկ դեպքերում, բացառապես նրանց թույլտվությամբ պահարանը կարող են բացել միայն դայակը և ընկերները: Հարցաթերթիկների վերլուծության արդյունքում պարզ դարձավ, որ կառույցի երեխաները հաճախակի են ունենում այցելուներ (ծնողներ, հարազատներ, ընկերներ), հանդիպումները տեղի են ունենում հաստատությունում, որն է ժամանակային սահմանափակում չկա, իսկ տեսակցության տրամադրման մերժում լինում են բացառապես հատուկ դեպքերում, երբ ծնողը գրկված է ծնողական իրավունքից, այցելուն գտնվում է ոչ սթափ վիճակում, կամ երեխայի մոտ բացակայում է տեսակցելու ցանկությունը:

## 5. «ԵՐԵՒԱՆԵՐԻ ՏՈՒՆ» ՊՈԱԿ

Հաստատությունն իրականացնում է 1 օրականից մինչև 6 տարեկան հաշմանդամ երեխաների բժշկավերականգնողական, սոցիալ հոգեբանական աշխատանքներ, ապահովում է երեխաների իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը, նյութական ու կենցաղային պահանջների բավարարումը, դաստիարակությունը:

Մանկատան հիմնական նպատակը կենտրոնական նյարդային համակարգի, օրգանական և ֆունկցիոնալ ախտահարումներով, բնածին ու ձեռքբերովի ֆիզիկական արատներ ունեցող հաշմանդամ երեխաների մշտական խնամքի ապահովումն է: «Երեխաների տան»-ը խնամվում են թվով 120 երեխաներ: Ելնելով երեխաների առողջական և մտավոր խնդիրներից, այս կառույցում դիտարկվանը մասնակցել են միայն աշխատակազմի թվով 28 անդամներ:

Հարցված աշխատակիցների 65%-ը ունի երեխաների հետ աշխատելու 10-տարուց ավելի աշխատանքային փորձ և համապատասխան բարձրագույն կրթություն:

Որպես ֆիզիկական և մտավոր զարգացման շեղումներ ունեցող երեխաների հատուկ մասնագիտացված մանկատուն, այն ապահովված է հոգեբանական, կանխարգելիչ, դեղորայքային, վերականգնողական ծառայություններով:

Աշխատակիցների հավաստմամբ, առողջության սահմանափակ հնարավորություններով երեխաների բուժ.գնությունը և բուժ.օգնությունը հաստատությունում իրականացվում է հաշվի առնելով երեխաների բժշկական փաստաթղթերը, իսկ բացակայության և հատուկ դեպքերում հաստատության կողմից ուղղորդվում են ախտորոշման: Ըստ ախտորոշման բժշկական ծառայությունը մատուցվում է տեղում, հաստատության բժշկի և բուժքրոջ կողմից՝ անվճար հիմունքներով: Վիրահատական միջամտության դեպքերում երեխան պետական պատվերի շրջանակներում ծառայությունը ստանում է համապատասխան բժշկական հաստատությունում: Հիգիենիկ գնությունը երեխաները անցնում են ամեն օր բուժքրոջ կողմից: Հաստատության սանիտարահիգիենիկ գնությունը իրականացվում է նույն հաճախականությամբ:


Երեխաների կողմից կատարված կարգապահական խախտումների դեպքում նախապատվությունը տրվում է անհատական բացատրական զրույցներին և մանկավարժահոգեբանական աշխատանքին: Կառույցում չի գործում որևէ պատժատեսակ, պատճառներից գլխավորը երեխաների հոգեբանական և ֆիզիկական վիճակն է: Ըստ կառավարության N1324 ն որոշման, մանկատունն ապահովում է երեխայի հանրակրթությունը, որպես կանոն համայնքի հանրակրթական դպրոցներում, անհրաժեշտության դեպքում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով տեղավորում հատուկ հանրակրթական դպրոցներում: «Երեխաների տուն» ՊՈԱԿ-ում 0-6 տարեկան սաներ են, և դա է պատճառը որ կառույցում հանրակրթական կրթություն չի կազմակերպվում: Փոխարենը համապատասխան տարիքի երեխաները հնարավորություն ունեն ստանալու նախադպրոցական կրթություն հաստատությունում: Այն ավարտելուց

հետո, ելնելով երեխայի խնդիրներից, նա տեղափոխվում է ներառական/հատուկ դպրոց, շարունակելու հանրակրթությունը: Իսկ երեխաների բազմակողմանի և ներդաշնակ զարգացումը ապահովվում է հաստատությունում գործող տարբեր խմբակների միջոցով (երաժշտական, արտ թերապիա. լող, նկարչական, լոգոպետական, հոգեբանական)՝ հաշվի առնելով անձի նախասիրությունները, հետաքրքրությունները և ընդունակությունները: Հաստատությունում գրանցված է 7 տարեկան արական սեռի դպրոցահասակ մեկ երեխա, ով ունի հենաշարժողական խնդիր: Հաստատության ներսում չի ապահովվում երեխայի հանրակրթությունը, իսկ հաստատությունից դուրս երեխան չի հաճախում համապատասխան հատուկ հանրակրթական դպրոց՝ շարունակելով մնալ որպես կառույցի շահառու:

## 6. «ԹՌՉՈՒՆՅԱՆ ՏՈՒՆ» ՄԱՆԿԱՏՈՒՆ-ԿՐԹԱՐԱՆ

Հետազոտությունը իրականացվել է Գյումրիում գործող «Թռչունյան Տուն» մանկատուն կրթարանում: Այն չի գտնվում ՀՀ որևէ գերատեսչության ենթակայության տակ և չի ստանում պետական աջակցություն: Երեխաների ուղղորդումը կատարվում է նաև ՀՀ սոցիալական ապահովության նախարարության կողմից: Այն բարեգործական հաստատություն է, որը ֆինանսավորվում է հովանավորի կողմից և ունի հոգաբարձուների խորհուրդ: Հաստատությունն իրականացնում է սոցիալապես անապահով ընտանիքի՝ 6-18 տարեկան երեխաների խնամքի և դաստիարակության ապահովումը, սոցիալ-հոգեբանական վերականգման աշխատանքների իրականացումը, նրանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանությանն աջակցելը, սննդով, հագուստով և կենցաղային իրերով ապահովումը, հանրակրթական ուսումնական հաստատություններում ուսուցման, ինչպես նաև բժշկական օգնության կազմակերպումը: Դիտարկմանը մասնակցել են 20 աշխատակիցներ և հաստատության շահառու 51 երեխաներ: Երեխաների կարծիքով կառույցի սանիտարահիգիենիկ վիճակը գտնվում է լավ վիճակում՝ 74%, բավարար՝ 10%: Աշխատակիցները հավաստեցին, որ սանիտարահիգիենիկ զննությունը հաճախակի է իրականացվում հաստատությունում: Երեխաները հիգիենիկ զննությունն անցնում են ամեն օր բուժքրոջ կողմից:

Այն հարցին թե հիգիենայի պարագաներ (օձառ, շամպուն, ատամի մածուկ, ատամի խոզանակ, սրբիչ, սանր, եղունգ կտրիչ) տալի՞ս են և ի՞նչ հաճախականությամբ հարցված երեխաների 21%-ը նշել են, որ ստանում են, 17%-ը չեն ստանում, 14%-ը տանից են բերում, իսկ հաճախականության վերաբերյալ 25%-ը նշել են, որ ստանում են ամիսը 1 անգամ, 23%-ը չեն պատասխանել: *(Նկար 9):*






Մանկատունը ապահովված է առաջին բուժօգնության ծառայության անհրաժեշտ դեղորայքով և սարքավորումներով: Բուժօգնությունը իրականացվում է հաստատության բուժքրոջ կողմից՝ անվճար հիմունքներով:


Երեխայի բժշկական փաստաթղթերի բացակայության դեպքում վերջինս ուղղորդվում է մանկատան բուժօգնության կազմակերպման գործընթացի մեթոդական և խորհրդատվական օգնությունն իրականացնող և մանկատան տարածքը սպասարկող պոլիկլինիկական հաստատություն, որտեղ ստանում է համապատասխան օգնություն պետական պատվերի շրջանակում: Հաստատությունը ապահովում է երեխաների կրթություն ստանալու իրավունքը կառույցի ներսում գործող հանրակրթական դպրոցի միջոցով:

«Թոշունյան տան» խնամակալության տակ գտնվող 34% սաների կարծիքով, աշխատակազմի վերաբերմունքը իրենց նկատմամբ լավ է, 23%-ը նշում են, որ բավարար, իսկ 30%-ը նշել են, որ վատ են վերաբերվում իրենց հետ (Նկար 10):




Հարաբերությունները մյուս երեխաների հետ ջերմ են և չկան լիդերներ: Այն հարցին, թե երեխաների միջև վեճերի դեպքում աշխատակիցները ինչպիսի՞ միջոցառումներ են ձեռնարկում, երեխաների 57%-ը պատասխանել են, որ պատժում են, 43%-ը՝ հաշտեցնում:

Սաների շրջանում դիտարկումները հնարավորություն տվեցին պարզելու, որ կարգապահական խախտումների դեպքում այս հաստատությունում կիրառվում են որոշակի պատժամիջոցներ, մասնավորապես՝ անկյուն կանգնեցնել, ծնկների վրա կանգնել, խփել, սննդից զրկել (Նկար 11):



Որպես ամենավախենալու պատժատեսակ նրանց կողմից նշվել է հաստատության հատակին և բակում ծնկների վրա կանգնելու մեթոդը: Աշխատակիցների կողմից նշվել է, որ հաստատությունում հազվադեպ և բացառիկ դեպքերում են պատժատեսակներ կիրառվում, հիմնականում բացատրական և ուղղիչ աշխատանքներ են տարվում երեխաների հետ: Բայց, այնուամենայնիվ, հարկ եղած դեպքում նրանց կողմից որպես սաստման եղանակ օգտագործվում է սիրելի զբաղմունքից և սննդից զրկելը: Իսկ թե մանկատանը բռնություն կիրառվելու դեպքում, որտեղ է այն նշվելու և արձանագրվելու, հարցվածներից և ոչ մեկը տեղեկացված չեն: Աշխատակիցներից շատերը տեղեկացված չեն նաև, թե ինչպիսի՞ միջոցառումներ են ձեռնարկվելու, երբ երեխան բռնության է ենթարկվել սեփական ընտանիքում: Երեխայի անձնական կյանքի գաղտնիության իրավունքի ապահովումը հաստատությունում ունի վիճակագրական հետևյալ պատկերը (Նկար 12):



## 7. ԸՆՏԱՆԻՔՆԵՐ

Մրագրի շրջանակներում մոնիթորինգային խմբի կողմից դիտարկումներ են իրականացվել նաև Գյումրիում գործող «Թռչունյան Տուն» մանկատուն-կրթարան, «Ֆրիտյոֆ Նանսենի անվան երեխաների խնամքի և պաշտպանության թիվ 2 գիշերօթիկ հաստատություն» ՊՈԱԿ, Գյումրիի «Երեխաների Տուն» ՊՈԱԿ և «Գյումրի քաղաքի երեխաների սոցիալական հոգածության կենտրոն» ՊՈԱԿ հաստատությունների շահառու երեխաների ընտանիքների անդամների շրջանում:

Դիտարկումն իրականացվել է մշակված հարցաթերթիկների և այցելությունների միջոցով: Հարցաթերթիկները տրամադրվել են հաստատությունների սաների ընտանիքների 40 անդամներին /ծնող, խնամակալ/ վեր հանելու ընտանիքների և հաստատությունների միջև առկա կապը, ընտանիքների սոցիալական վիճակը, ինչպես նաև հաստատություն-ծնող հարաբերությունները և հնարավոր կոռուպցիոն դրսևորումները:

Երեխաներին հաստատություններ հանձնելու գլխավոր պատճառը սոցիալական ծանր պայմաններն են, ինչպես նաև ծնողների/խնամակալների գործազրկությունը և հաշմանդամությունը, իսկ «Երեխաների տան» դեպքում՝ շահառու երեխաների մտավոր և ֆիզիկական խնդիրները:

Այն հարցին, թե երբևէ ծնողի կողմից կատարվել է որևէ վճարում հաստատությանը, «Գյումրի քաղաքի երեխաների սոցիալական հոգածության կենտրոն» ՊՈԱԿ-ի ծնողների 97%ը նշել է, որ երբևէ որևէ տեսակի վճարում չի կատարվել, իսկ 3%-ը խուսափել է պատասխանից: Նույն հաստատության ծնողներից մեկի հավաստմամբ, իր ընտանիքը գտնվում է սոցիալապես ծանր պայմաններում, երեխայի հայրը ունի երկրորդ կարգի հաշմանդամություն, իսկ 9 ամյա երեխան՝ մտավոր հետամնացություն: Վերջինս 2015թ. հուլիս ամսին երեխայի աչքերի բժշկական զննության նպատակով դիմել է տարածքային բժշկական հաստատություն: Զննությունն իրականացնելու համար վերջինիցս պահանջվել է 15.000 ՀՀ դրամ, մինչդեռ նախկինում երեխան հետազոտություն և բուժ. օգնություն ստացել է պետական պատվերի շրջանակներում:

«Ֆրիտյոֆ Նանսենի անվան երեխաների խնամքի և պաշտպանության թիվ 2 գիշերօթիկ հաստատություն» ՊՈԱԿ և Գյումրիի «Երեխաների Տուն» ՊՈԱԿ հաստատությունների ծնողների կողմից լրացված հարցաթերթիկները վկայում են այն մասին, որ երբևէ վճարումներ չեն կատարվել և հաստատության կողմից գումարներ չեն գանձվել երեխաներին տեսակցելու, բժշկական զննության, բժշկական օգնության, հագուստի, սննդի և գրենական պիտույքների համար:

«Թռչունյան Տուն» մանկատուն-կրթարանի սաների ծնողների 14%-ը հավաստել են, որ երեխաներին հիգիենիկ պարագաներ հաստատության կողմից չեն տրամադրվում և պահանջում են ընտանիքից՝ գնելու անհրաժեշտ իրերը:

## 8. ԵԶՐԱՓՈՒԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Զեկույցի նպատակը՝ աջակցել Գյումրի քաղաքում գործող «Թռչունյան Տուն» մանկատուն-կրթարան, «Ֆրիտյոֆ Նանսենի անվան երեխաների խնամքի և պաշտպանության թիվ 2 գիշերօթիկ հաստատություն» ՊՈԱԿ, Գյումրիի «Երեխաների Տուն» ՊՈԱԿ և «Գյումրի քաղաքի երեխաների սոցիալական հոգածության կենտրոն» ՊՈԱԿ հաստատություններում երեխաների իրավունքների և շահերի պաշտպանության մեխանիզմների ստեղծմանն ու ապահովմանը, ինչպես նաև վեր հանել և կանխարգելել ընտանիք-հաստատություն հարաբերություններում հնարավոր կոռուպցիոն դրսևորումները:

Երեխայի կրթության և զարգացման իրավունքը վերոնշյալ կառույցներից 3-ում ապահովված է: Երեխաները նախադպրոցական և դպրոցական կրթություն ստանում են ինչպես հաստատությունների ներսում, այնպես էլ այլ հանրակրթական դպրոցներում: «Երեխաների տուն» ՊՈԱԿ-ում այն ապահովված է մասամբ: Հաստատության խնամքի տակ գտնվող 7 տարին լրացած հենաշարժողական խնդիրներ ունեցող երեխան նախադպրոցական կրթությունը ստացել է հաստատությունում, սակայն այժմ հանրակրթություն չի ստանում որևէ հատուկ կրթական հաստատությունում և կառույցը չի ապահովում վերջինիս կրթություն ստանալու իրավունքը:

Երեխաների առողջության պահպանման իրավունքը դիտարկված հաստատություններում ապահովվում է: Իրականացվում է երեխաների և կառույցի սանիտարահիգիենիկ զննություն, երեխաները առաջին բուժ. օգնություն ստանում են հաստատության բուժքրոջ կողմից անվճար հիմունքներով: Հատուկ դեպքերում (հետազոտություն, վիրահատական միջամտություն) հաստատության ուղղորդմամբ ախտորոշում և բուժ. օգնություն երեխաները ստանում են համապատասխան պոլիկլինիկաներում և բուժ. հաստատություններում՝ պետական պատվերի շրջանակներում:

Սակայն «Ֆրիտյոֆ Նանսենի անվան երեխաների խնամքի և պաշտպանության թիվ 2 գիշերօթիկ հաստատություն» ՊՈԱԿ-ում և «Թռչունյան տուն» մանկատուն-կրթարանում հայտնաբերվել են հետևյալ թերությունները. «Ֆրիտյոֆ Նանսենի անվան երեխաների խնամքի և պաշտպանության թիվ 2 գիշերօթիկ հաստատություն» ՊՈԱԿ-ում երեխաներին հիգիենիկ պարագաներ հաստատության կողմից տրամադրվում է 1 տարին 2 անգամ հաճախականությամբ, իսկ «Թռչունյան տուն» մանկատուն-կրթարանի պարագայում պատկերն այլ է. հարցված սաների 17%-ին չեն տրամադրվում հիգիենիկ պարագաներ, իսկ 14%-ից պահանջվում է ընտանիքներից, ինչը հնարավոր կոռուպցիոն դրսևորում է: «Թռչունյան տուն» մանկատուն-կրթարանում 4 երեխային տալիս են 1 շամպուն և մեկ ատամի մածուկ: Բացի այն, որ սա հնարավոր կոռուպցիոն դրսևորում է, այն նաև նպաստում է երեխաների միջև կոնֆլիկտների առաջացմանը և ազդում երեխաների առողջության պահպանմանը:

Դիտարկման ենթարկված 4 հաստատություններից 3-ում երեխայի անձնական կյանքի գաղտնիության իրավունքը պահպանվում է, իսկ «Թռչունյան տան»-ը այս

ուղղությանը առկա են որոշակի բացեր: Կառույցն արգելում է անձնական հեռախոս ունենալ, երեխաները օգտվում են հաստատության հեռախոսից բացառապես ծնողների և ընտանիքի անդամների հետ կապը պահպանելու նպատակով, իսկ հեռախոսագրույցները վերահսկվում են գործավարուհու կողմից: Երեխաներն ունեն իրենց անձնական պահարանները, սակայն վերջիններս հասանելի են աշխատակիցներին, առանց երեխաների թույլտվության պարբերաբար իրականացվում է զննություն դայակների կողմից:

**Երեխայի՝ բնությունից պաշտպանության իրավունքը** ապահովված է մասամբ: Դիտարկված «Թռչունյան Տուն» մանկատուն-կրթարան, «Ֆրիտյոֆ Նանսենի անվան երեխաների խնամքի և պաշտպանության թիվ 2 գիշերօթիկ հաստատություն» ՊՈԱԿ և «Գյումրի քաղաքի երեխաների սոցիալական հոգածության կենտրոն» ՊՈԱԿ հաստատություններում խախտվում է ՀՀ Կառավարության N1324-ն որոշման 14 չափորոշչի 38 կետը, այն է՝ մանկատանն անհնազանդ, անկառավարելի երեխայի նկատմամբ կիրառվում է համապատասխան մանկավարժական մոտեցում՝ մեթոդներ, հնարներ՝ հաշվի առնելով նրա տարիքը և զարգացման աստիճանը: Արգելվում է որևէ պատժամիջոցի (ներառյալ նաև սննդի, հանգստի և անձնական հիգիենայի պայմանների, ծնողական իրավունքից չզրկված ծնողների, օրինական ներկայացուցիչների, հարազատների հետ տեսակցության սահմանափակումների) կիրառումը:

Դիտարկված վերոնշյալ կառույցների կողմից իրականացվող պատժատեսակները բնության դրսևորումներ են, որոնք խոչընդոտում են նաև երեխաների անհատական զարգացման իրավունքի ապահովմանը: Լայնորեն կիրառվող պատժատեսակներն են՝ սիրելի զբաղմունքից զրկելը, խփելը, ծնկների վրա կանգնեցնելը (հաստատության հատակին և բակում), ընդհուպ մինչև սննդից զրկելը: Պատժատեսակներ, որոնց կիրառությունն արգելված է: Երեխաների հանդեպ բնությունն ենթարկվում է նաև սեփական ընտանիքի կողմից:

**Երեխաների՝ ծնողներին ճանաչելու և ընտանիքի հետ կապ պահպանելու իրավունքը** բոլոր կառույցների կողմից ապահովված է:

## ***9. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ***

**Առաջարկություն 1.** Հաշվի առնելով Երեխայի իրավունքների մասին կոնվենցիան, «Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենքը և Կառավարության N1324-ն որոշումը, առաջարկվում է Գյումրի քաղաքում գործող «Թռչունյան Տուն» մանկատուն-կրթարան, «Ֆրիտյոֆ Նանսենի անվան երեխաների խնամքի և պաշտպանության թիվ 2 գիշերօթիկ հաստատություն» ՊՈԱԿ, Գյումրիի «Երեխաների Տուն» ՊՈԱԿ և «Գյումրի քաղաքի երեխաների սոցիալական հոգածության կենտրոն» ՊՈԱԿ հաստատություններում ուժեղացնել վերահսկողությունը ՀՀ կրթության և գիտության, աշխատանքի և սոցիալական ապահովության նախարարությունների կողմից՝ հաստատություններում գործող պատիժները և երեխաների հանդեպ կիրառվող բնությունը վերացնելու, ինչպես նաև երեխայի կրթության և անհատական զարգացման իրավունքի ապահովման նպատակով:

**Առաջարկություն 2.** Հիմք ընդունելով Երեխայի իրավունքների մասին կոնվենցիան, «Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենքը, ՀՀ կառավարության N1324-ն որոշումը, ինչպես նաև դիտարկման արդյունքները, առաջարկվում է ՀՀ Կրթության և գիտության, աշխատանքի և սոցիալական ապահովության նախարարությունների վերահսկողության տակ վերցնել «Թռչունյան տուն» մանկատուն-կրթարանը: Այն գործում է բարեգործական հիմունքներով և չի գտնվում որևէ գերատեսչության ենթակայության ներքո, դուրս է պետական վերահսկողությունից:

**Առաջարկություն 3.** Հաշվի առնելով այն հանգամանքը, որ դիտարկված հաստատություններում երեխաների հանդեպ կիրառվում է պատիժ և բնություն, ինչը արգելված է համաձայն Երեխայի իրավունքների մասին կոնվենցիայի (հոդված 19), «Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենքի (հոդված 9), ինչպես նաև ՀՀ կառավարության N1324-ն որոշման 14 չափորոշչի 38 կետի) Մարդու Իրավունքների Պաշտպանի գրասենյակին առաջարկվում է ուշադրության կենտրոնում պահել խնդիրը և համապատասխան քայլեր ձեռնարկել նշյալ կառույցներում երեխաներին բնությունից պաշտպանելու համար:

**Առաջարկություն 4.** Դիտարկման արդյունքներից ելնելով՝ ՀՀ կրթության և գիտության, աշխատանքի և սոցիալական ապահովության նախարարություններին առաջարկվում է վերանայել հաստատությունների ներքին կանոնակարգերը, ըստ որոնց, իրականացվում է հիգիենիկ պարագաների տրամադրումը հաստատությունների սաներին: